ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

« ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-16/2» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.02.2016թ. ժամը $11^{00}$-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հովսեփյան, Ա. Հակոբյանը, Վ.Պետրոսյանը, Վ. Հարությունյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

<u>Օրակարգ</u>

<u>Հայտերի բացման և գնահատման մասին</u>

**1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

« ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-16/2» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ (ք. Երևան, Նորք 2-րդ, 32 տ)
2. Արման Ասմանգուլյան Ա/Ձ (ք. Երևան, Ներսիսյան 1, 17)
3. «ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ (ք. Երևան, Դավիթաշեն 3թ. 11/6 շ.)
4. «ՅԱՍՈՆ» ՍՊԸ (ք. Երևան, Վրացական 16)
5. <Բեկոր-Հրատ> ՍՊԸ (ք. Երևան, Ազատության 21. Բն. 31)
6. «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ (ք. Երևան, Ավան, Չարենցի 92., բն.22)
7. «ՀԱՅՐԱՊԵՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ (ք. Երևան, Նոր Արեշ 26/1)
8. «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ԱՐՏԱԴՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ» ԲԲԸ (ք. Երևան,0056, Սաֆարյան 11/1ա)

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 19.02.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

## 2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

## 3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

## 4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ | Արման Ամանգուլյան Ա/Ձ | «ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ | «ՅԱՍՈՆ» ՍՊԸ | <Բեկոր-Հրատ> ՍՊԸ* | «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ | «ՀԱՅՐԱՊ ԵՏ ՀՐԱՏԱՐԱ ԿՉՈՒԹՅՈ ԻՆ» ՍՊԸ* | ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ԱՐՏԱԴՐԱՀՐ ԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ» ԲԲԸ |
| 1 | Մատյան | 1442575 | 1746275 | 1933340 | 1550000 | 1640000 | 1844977.5 | 1822200 | |
| 2 | Մատյան | 1461915 | 2018250 | 2234700 | 1790000 | 1999000 | 2021760 | 2106000 | 1740000 |
| 3 | Անձնական գործի թղթապանակ | 624000 | 1400000 | | 519000 | 610000 | | 300000 ✓ | |
| 4 | Սուրհանդակի միջոցով ուղարկվող փաստաթղթերի գրանցման գիրք | 724710 | 824670 | 1151670 | 684000 | 800000 | 882147 | 1149540 | |

* Կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ չվճարող

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. Հանձնաժողովը որոշեց՝**

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1-2 չափաբաժինների համար «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ -ին,
3-րդ չափաբաժնի համար «ՀԱՅՐԱՊԵՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ -ին
4-րդ չափաբաժնի համար «ՅԱՍՈՆ» ՍՊԸ –ին

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝
1, 3 չափաբաժինների համար «ՅԱՍՈՆ» ՍՊԸ –ին,
2-րդ չափաբաժնի համար < ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ԱՐՏԱԴՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ» ԲԲԸ –ին:
4- րդ չափաբաժնի համար <Բեկոր-Հրատ> ՍՊԸ-ին:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՖՆ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ,
3. Համաձայն Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ «ՀԱՅՐԱՊԵՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ –ին 3-րդ չափաբաժնի համար պահանջել ներկայացնելու լրացուցիչ հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Ա. Հովսեփյան

____________ Վ. Պետրոսյան

____________ Վ. Հարությունյան

____________ Ա. Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Մ.Մուրադյան